

ՄԱՏԵՆԱՇԱՐ „ՊԱՐՏԷԶ“Ի — ԹԻՒ 7

Համարակիչ՝ Յ. ՄԱՐԱՇԼԱՆ

ՊԶՏԻԿ ԳԱԼՈՒՍ
ԵՒ
ՄԵԾ ԳԱԼՈՒՍ

Հեղինակ՝ Ա. Ն Տ Ե Ր Ա Ղ Ն
Հայացուց՝ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇՅԱՆ



Ըստըն „ԹՈՒ.ՄՈ.Ա“ ՓԼՈՎՏԻԿ

1939

839.815

Ա - 58

-6 NOV 2011

ՄԱՏԵՆԱՇԱՐ „ՊԱՐՏԷԶ“ Ի - ԹԻՒ 7

839.815
Ա - 58

Հրատարակիչ՝ Յ. ՄԱՐԱՇԵԱՆ

ՊԶՏԻԿ ԳԱԼՈՒՍ

ԵՒ

ՄԵԾ ԳԱԼՈՒՍ

Հեղինակ՝ Ա. Ն Տ Ե Ր Ս Ը Ն

Հայացուց՝ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ



Տպարան „ԹՈՎ. ՄԱ. Ա“ Հ ՓԼՎՏԻԿ

1939

ԱՐՑ ՎՈՒ 8-

12 FEB 2013

1662

ՄԵԾ ԳԱԼՈՒՍ

— ԵՒ —

ՊԶՏԻԿ ԳԱԼՈՒՍ



Դիւզի մը մէջ՝ միեւնոյն անունը կրող երկու գիւղացիներ կ'ապրէին: Երկուքին ալ անունը Գաշուստ էր: Բայց մէկն ունէր չորս ձի, միւսը միայն մէկ ձի:

Իրարմէ զանազանելու համար այս երկուքը, ասածինը կ'անուանէին Մեծ Գալուս, թէև երկուքն ալ մէկ հասակ ունէին, և երկրորդը, այսինքն մէկ ձի ունեցողը՝ Պօտիկ Գալուս:

Հիմա մտիկ ըրեք իրենց պատահածը:

Այբողջ շաբաթը, Պօտիկ Գալուստ Մեծին համար կ'աշխատէր և երկիրը կը ճերկէր արօրով, որուն կը լծէր իր միակ ձին: Ասոր փոխարէն, Մեծ Գալուստ Պօտիկին կ'օգնէր իր չորս ձիերով, բայց շաբաթը մէկ անգամ միայն, կիրակի օրերը:

Հուրաց, աեսնելու բան էր թէ այն ասեն Պօտիկ Գալուստ ի՞նչպէս կը շաշեցնէր իր մտրակը՝ խը-



587 - 92

բախուսելու համար իր հինգ ձիերը. որովհետեւ այն
օրը իրենը կը նկատէր բլոր ձիերը:

Կիրակի օր մը, օդը շատ գեղեցիկ էր, զանդակ-
ները ուժգին կը հնչէին, և մարդիկ խումբ խումբ,
իրենց կիրակնօրեայ հագուստները հագած, և աղօ-
թագրքերն իրենց թեւին ատակ, եկեղեցի կուրթային:

Երբ կ'անցնէին այն արտին քովէն՝ ուր Պղափկ
Գալուստ արօրը կը վարէր իր հինգ ձիերով, իր ու-
րախութեան մէջ և ցուցամոլութեամբ, կրցածին չափ
աւելի կ'աղմէէր իր մարակով, և բոլոր ուժով կը
պոռար.

— Հիւ, յառա՛ջ, իմ հինգ ձիերս:

— Ի՞նչ կըսես կոր, ընդմիջեց Մեծ Գալուստ —
չես զիտիր որ այս հինգ ձիերէն մէկը միայն քուկդ է:

Երբ գարձեալ մարդ անցնիլ սկսաւ, Պղափկ Գա-
լուստ մոռցաւ Մեծ Գալուստին պատուէրը, և նորէն
պոռաց.

— Հիւ, յառա՛ջ, իմ հինգ ձիերս:

— Կը խնդրեմ որ այս վերջինն ըլլայ, ըստ
Մեծ Գալուստ: Եթէ անգամ մըն ալ ըսես այդ խօս-
քը, այնպիսի հարուստ մը պիտի տամ քու ձիւով
դլխուն որ, շան սատակ պիտի ըլլայ: Այն ատեն բը-
նաւ ձի չպիտի ունենաս:

— Հանդարտէ՛. ալ այդ խօսքը չպիտի ըսեմ,
պատասխանեց Պղափկ Գալուստ:

Քիչ մը եաք, հարուստ գիւղացի մը կ'անցնէր,
որ գլխովը բարեկամական նշան մը ըրաւ իրեն:

Պղափկ Գալուստ հղարտացաւ և յատածեց որ իրեն
համար մեծ պասիւ մը պիտի ըլլայ, եթէ այս գիւ-
ղացին կարծէ թէ, արօրին լծուած հինգ ձիերը իրեն
կը պատկանին:

Նորէն չաչեցուց մարակը, միւս անգամներէն
աւելի ուժով պոռալով:

— Հիւ, յառա՛ջ, իմ հինգ ձիերս:

— Քեզի պիտի սորվեցնեմ քու ձիերուդ հիւ
քուելը:

— Եւ բան մը առնելով, այնպիսի չարուած մը
տուաւ Պղափկ Գալուստին ձիուն գլխուն որ, խեղճ
կենդանին գետին առաջարիցաւ և մահը վայրկենա-
կան եղաւ:

— Ուհ, ուհ, սկսաւ լալ Պղափկ Գալուստ, ա՛լ
ձի չունիմ. չիմա ի՞նչ պիտի ընեմ:

Բայց շուտով ինքզինքին եկաւ և յատած որ,
պէտք չէր ամէն բան կորսնցնել: Հանեց կենդանինին
մորթը, հովին դէմ աղէկ մը չորցուց զայն, պարզի
մէջ գրաւ, կոնակը զարկաւ և դէպի քաղաք ճամ-
քայ ելաւ, իր ձիուն մորթը ծախելու համար:

Ճամբան երկար էր. ընդարձակ և մութ անտա-
ռէ մը պիտի անցնէր: Երբ անտառը մտաւ, ուրուա-
կան մը պայթեցաւ որ երկինքը խաւարեցուց և Պղափկ
Գալուստ բոլորովին մոլորեցաւ: Երբ վերջապէս վե-
րըստին գտաւ ճամբան, արդէն շատ ուշ էր: Զէր կըր-
նար, գիշեր չեղած, քաղաք հասնիլ, ո՛չ ալ տուն վե-
րադառնալ:

Քիչ մը չեռուն, աղարակի մը մէջ, մեծ առւն մը ահսաւ, Փեղկերը զսց էին. բայց ձեղքերէն լսյունքներէր:

— Անշուշտ այս գիշերուան համար պառկելու տեղ մը կսւան ինձ, մտածեց և գնաց զուռը դարկաւ-

Գիւղացի կին մը, որ անափիրունին էր, բացաւ գուռը: Գալուստ իր խնդիրքը ըրաւ, բայց կինը մերժեց զինքը ներս առնել յայտնելով թէ իր ամուսինը առնը առնը չէր, և թէ անոր բացակայութեանը չէր կրնար օտար մարդ ներս առնել:

— Ուրեմն դուրսը պիտի մնամ, ըստւ Պատիկ Գալուստ:

Գիւղացի կինը, առանց պատասխանելու, դուռը երեսին զցեց:

Տանը մօսերը կալորայ (ցորեն ծեծելու տեղ) մը կար, և անոր դիմաց սայլատուն մը՝ յարդով ծածկը ուափարակ տանիքով մը:

— Ես հիմա հոն կ'ելլեմ, ըստւ Գալուստ ինքնիրեն, ասիկա գետինը պառկելէն աղէկ է, և մանաւնդ այդ յարդը աղուոր անկաղին մը պիտի ըլլայ ինծի համար: Տանիքին վրայ զսյզ մը արագիներ լոյն դրած են, բայց կը յուսամ որ, եթէ զիրենք անհանդիսա չընեմ, քնացած ատենս չպիտի գան կը տուցի հարուածներ աալու ինծի:

Ըսելն և ընելը մէկ եղաւ, Տանիքին վրայ ելաւ, կատաւի մը պէս ինքն իր վրայ գառնալէ յետոյր տեղաւորուեցաւ՝ գիշերը չոն անցընելու համար:

Բայց աեսաւ որ առնը փեղկերը վկրի կողմէն շատ կարձ էին, և իր գանուած աեղէն կը աւենէր ամէն ինչ որ աեղի կ'սւնենար գետայարկի մեծ սենեաւ կին մէջ:

Գիւղացիկ փոսցով մը ծածկուած սեղան մը կար հոն, որուն վրայ դրաւած էր պնակ մը խորոված միս, չիանալի ձուկ և չի մը զինի:

Սեղան նստած էին գիւղացի կինը և զիւղին լուսարարը. ուրիշ մարդ չկար: Տանափրունին զինի կը լեցնէր լուսարարին գաւաթին մէջ, որ կը պատրաստաւէր ձուկէն շերտ մը ուտելու, զայլածուկ (բուրնա) մը, որ իր սիրական կերակուրն էր:

Գալուստ, որ չէր ձաշած, վիզը երկարեց և սկըսուանակաբար նայիլ այդ ախորժաբեր ուտելիքներուն: Եւ աչա՛ կը նշմարէ նաև չիանալի կարկանդակ մը ոսկեգոյն, որ վերապահուած էր աղանդերի համար: Ի՞նչ խնչոյք:

Յանկարծ կը լսէ ձիու մը քայլերուն ձայնը: Տանը առջեւ կանգ կ'առնէ ձին, և վրայէն վար կ'իջնէ ագարակատէրը, գիւղացի կնոջ ամուսինը:

Ազնիւ մարդ մըն էր ան: Բայց օր մը, երբ տակաւին փողոցի աղայ մըն էր, աղուոր ծեծ մը կերաւ լուսարարէ մը, որ զայն յանցաւոր կը նկատէր, եկեղեցին զանդակը անժամանակ զարկած ըլլալուն համար:

Զանզակը զարնողը ինքը չէր, իր մէկ ընկերն էր: Այն օրէն ի վեր, մեր ագարակապանը կատաղի

առելութիւն մը կը սնաւցանէր բոլոր լուսարարներուն դէմ. կը բաւէր որ անոնցմէ մին աեսնէր՝ զայցանալու համար:

Եթէ լուսարարը գացած էր «բարի իրիկուն» ըսելու, պատճառն այն էր որ զիտէր թէ առնաէրը բացակայութիւն էր: Գիւղացի կինը, որ իր ամուսինին նախապաշարումները չունէր, այս գեղեցիկ խնջոյքը պատրաստած էր լուսարարին, փախարինելու համար այն առելավառ նայուածքները զոր ագարակապանը կ'ուղղէր լուսարարին, ամէն անդամ որ անոր հանդիպէր:

Երբ ձիուն սաքին ձայնը լսեցին և փեղկին ձեղքերէն ֆանչցան ագարակապանը, սոսկացին, և գիւղացի կինը թախանձեց լուսարարը՝ հոն զանուսղ պարապ մէծ սնաւաւկին մէջ մանելու և պահութանը:

Լուսարարը սիրայօժար կատարեց անոր այս խնդրանքը: Գիտէր թէ աղնիւ ագարակապանը ակարութիւնն աւնէր չի հանդուրժելու լուսարարի մը տեսքը:

Յետոյ, կինը անմիջապէս փուռին մէջ պահեց կերակուրները, կարկանդակը և զինիին շիշը: Եթէ ամուսինը աեսնէր զանոնք, անշուշտ պիտի հարցնէր թէ ի՞նչ բանի համար է այս պատրաստութիւնը: Պէտք պիտի ըլլար ստել և հաւանաբար շփոթէր ու ինքզինքը մատնէր:

— Ի՞նչ զժբախտութիւն, գոչեց Պղափկ Գալուստ, տանիքին վրայէն, երբ բոլոր այդ ախորժանամ կերակուրներուն աներեւութանալը տեսաւ:

— Հէյ, ո՞վ կայ հոն, ըսաւ ագարակապանը, Պղափկ Գալուստին բացագանչութիւնը լոելով:

Գլուխը վերցուց և տեսաւ Պղափկ Գալուստը: Սա իրեն պատահածը պատմեց և թոյլտութիւն խընդրեց տանիքին վրայ մնալու:

— Շուտ վար իջի՞ր, ատանս մէջ պիտի պառկիս, և յետոյ, անշուշտ, չպիտի մերժես մեղի չետ ձաշել:

Կինը բռնազբանիկ ծիծաղներով և ուրախութեան ցոյցերով ընդունեց իր ամուսինը: Վերսափին սեղանին վրայ ծածկեց փասցը և մեծ պնակ մը լեցուն ապուր բերաւ: Ագարակապանը, որ շատ անօթի էր, սկսաւ ախորժակով ոււսել: Պղափկ Գալուստ գէչ չէր գանէր աղուրը, բայց ցաւելով կը մասձէր հիւթեղ խորովածին, ձուկին և կարկանդակին վրայ, որոնց փուռին մէջ տնչետանալը տեսած էր:

Սեղանին տակ դրած էր ձիուն մորթը պարունակող պարկը, սոքերն ալ վրան: Այս աղուրը կերակուրներէն և ո՞չ մէկը չի կարենալ ձաշակելու զայրայթովը՝ անչամբերութեան շարժում մը ըրաւ և ոսքովը ուժով մը զարկաւ պարկին: Պարկը, որ նոր չորցած էր, ճարճատիւն մը տրծակեց:

— Բը՞ս, բը՞ս, ըսաւ Պղափկ Գալուստ այնպիսի ձեւով որ կարծես թէ մէկը լոեցնել կ'ուզէր, բայց միեւնոյն տակն սոքի նոր հարուստ մըն ալ տուաւ պարկին, և աւելի զօրաւոր ճարճատիւն մը լսուեցաւ:

— Աս ի՞նչ է, ըսաւ գիւղացին. ի՞նչ ունիս
պարկիդ մէջ:

— Կախարդ մըն է, պատասխանեց Պղտիկ Գա-
լուստ: Իր լեզուով կը հասկցնէ ինձի թէ, պէտք է
թողունք ապուրը և ուսինք խսրովածը, ձռւկը և
կարկանդակը, զարոնք հմայքով մը բերել տուած և
դրած է փուռին մէջ:

— Կատա՞կ կ'ընես, զոչեց ագարակապանը և
ցատկեց բացաւ փուռին դուռը, և աչքերը խոլորտծ
մնաց այն համադած և հիւթեղ կերակուրներուն առ-
ջեւ զարս իր կինը պահած էր հոն, բայց ինքը կար-
ծեց որ՝ կախարդի մը կողմէ բերուած է:

Ազարակապտնուհին ալ զարմանալ ձեւացուց և
զգուշացաւ գիտողութիւն ընելէ. բերաւ սեղանին
վրայ դրաւ խսրովածը, ձռւկն և կարկանդակը, զա-
րոնք ագարակապանը և իր հիւրը ճաշակեցին:

— Եւ ահա՝ Գալուստ կամաց մը վերաբին ոս-
քի հարուած մը տուաւ պարկին. ճարճատիւնի ձայ-
նը դարձեալ լսուեցաւ:

— Նորէն ի՞նչ կ'ըսէ կոր, չարցուց ագարա-
կապանը:

— Կ'ըսէ թէ, պատասխանեց Պղտիկ Գալուստ,
չուզեր որ ծարաւինք. միշտ չմայքով մը՝ օղին մէ-
ջէն բերել տուած է երեք շիշ հիանալի գինի, որ այս
սինեակին մէջ անկիւն մը դրուած է:

Ազարակապանը փնտուելու ելաւ և արդարեւ
զաւ շիշերը, զարոնք խեղճ կինը սեղանին վրայ
դրաւ ակամայ, խիցերը չանելով:

Երկու մարդիկը լեցուն գաւաթնելով խմեցին
ու խմեցին, և ագարակապանը խիստ ուրախացաւ:

— Ըսէ՛ նայիմ, հարցուց, քու կտիարդդ կըր-
նա՞յ սատանան ալ կանչել: Այս ուրախութեան պա-
հուս, սչինչ տւելի պիտի զուարձացնէ զիս քան Բե-
նեղզերուչին դէմ քի ծամածուութիւնները:

— Այս՛, այս՛, պատասխանեց Գալուստ, իմ կա-
խարդս ամէն ուզածս կ'ընէ: Շիտակ չէ՞ ըսածս, շա-
րունակեց, ոտքովը չարուած մը տալով պարկին: Կը
լսի՞ս, «այս՛» կ'ըսէ: Բայց կ'աւելցնէ թէ, սատանան
այնքան տգեղ է որ, աղէկ պիտի ընէինք՝ զայն տես-
նել չուզելով:

— Օ՛չ, ես չիմ վախնար այսօր, ըսաւ ազարա-
կապանը: Որո՞ւ կրնաս նմանցնել սատանան:

— Ճիշդ ու ճիշդ լուսարարի մը կերպարանքն
ունի:

— Ա՛չ, ըսաւ գիւղացին, ըսել է թէ սոսկալի
կերպարանք մը ունի: Պէտք է գիտնաս որ ես կը
սոսկամ լուսարարներէն: Գէ՛շ բան, սակայն որով-
հետեւ չիմա գիտեմ թէ գալիքը ճշմարիտ տիրացու
մը չէ, այլ նոյն ինքն սատանան իր սեւ կերպարան-
քովը, իր ահսքը այնքան անհաճոյ տպաւ որութիւն
մը չպիտի ընէ վրաս: Վերջին շիշն ալ պարզենք
ուրեմն, տւելի քաջ ըլլալու համար: Ի՞նչ որ ալ
ըլլայ, պատուիրէ՛ որ շատ չի մօսենայ ինձի:

— Տեսնե՞նք, որոշումդ չասամա՞տ է, ըսաւ Պղտ-
իկ Գալուստ, ուրեմն չարցնեմ կախարդիս:

Շարժեց պարկը և ականջ դրաւ ու մտիկ ըրաւ:

— Կ'ըսէ թէ կրնաք սա անկիւնը զրուած մհծ անտուկը բանալ և մէջը աւանել աստանան՝ կծկուած վիճակի մէջ: Բայց կափարիչը աղէկ բանեցէք և չառ մի վերցնէք, որպէսզի չարաձձին չի փախչի:

— Ո՞ն, յառա՞ջ, ըսաւ ագարակապանը. եկուր օդնէ ինծի՝ ամուր բռնելու կափարիչը:

Յառաջացան դէպի սնառուկը, որուն մէջ խեղճ տիրացուն կծկուած էր և վախէն կը դողդզար: Ազարակապանը քիչ մը վերցուց կափարիչը ու նայեցաւ:

— Ո՞ւչ, պոռաց դէպի ի եաեւ ցատկելով: Ես աեստ եմ այս ժանատպէմ սատանան. մեր լրւարարն ինքն իսկ է միսով ու ոսկորով: Ո՞ն, ի՞նչ սոսկում:

Եւ իր սոսկումը փարատելու համար, ագարակապանը դաւաթ մըն ալ ուզեց խմել: Եւ որսվչեաեւ երեք շիշերը պարպուած էին, ներքնատունն իջաւ՝ շիշ մը գինի բերելու համար: Այսպէս բաւական ատեն բաժակները արինկեցին և շաղակրատեցին:

— Պէտք է որ, ըսաւ ագարակապանը, ինծի ծախես այս կախարդը: Ի՞նչ գին կ'ուզես: Ահաւասիկ զրիւ մը ոսկի կուտամ քեզի:

— Ո՞չ, չեմ կրնար, պատասխանեց Պղտիկ Գալուստ: Մտածէ՛ անզամ մը թէ ի՞նչ շահեր կրնամ ձեռք բերել այս կամարար կախարդին շնորհիւ որ ամէն ուզածս կ'ընէ:

— Բայց այս բարեկամութիւնը ըրէ՛ ինծի, ըսաւ զիւղացին: Եթէ չի տաս, սրտիս ցաւէն պիտի մեռնիմ:

— Լա՛ւ, թող այնպէս ըլլայ. քանի որ զուն ա՛յնքան բարի գտնուեցար ինծ հանդէպ և այս զիւղուան համար պառկելու աեղ մը առւիր ինծի, եռ ալ այս զոհոզութիւնը պիտի ընեմ: Բայց զրիւը լիփեցուն պիտի ըլլայ ոսկիներով:

— Համաձայն ենք: Պէտք է նաեւ որ այս սընտուկը հետոդ ատնիս. վայրկեան մը իսկ չեմ ուզեց տանս մէջ պահել զայն: Զինք գիտեր, կրնայ ըլլալ որ ստանան աեղուորուած ըլլայ անոր մէջ:

Սակարկութիւնը վերջացած ըլլալով, Պղտիկ Գալուստ ուզեց որ կէս գիշերին մեկնի, վախնալով որ գիւղացին մի զուցէ փոխէ իր միտքը:

— Յանձնեց իր ապրանքը, այսինքն՝ պարկը և մէջի մորթը, և սաւցաւ զրիւ մը լիցուն գեղեցիկ ոսկի:

Որպէսզի կարենայ սնառուկը տանիլ, գիւղացին սայլակ մըն ալ տուաւ անոր: Պղտիկ Գալուստ անոր վրայ բեոցուց իր դրամը և տիրացուն պարունակող սնառուկը: Բարեկամարար իրարու ձեռք թօթուելէ յետոյ, Գալուստ մեկնեցաւ, բռնելով իր տան ձամբան:

Նորէն մեծ անատոէն անցաւ և հասաւ լայն և խորունկ գետի մը ափը, որուն հոսանքը այնքան արագ էր որ, ամենէն ձարպիկ լողացողներն իսկ գժուարաւ հոսանքն ի վեր կրնան ելլել: Այս գետին վրայ գեռ վերջերս նոր կամուրջ մը շինած էին: Պղտիկ Գալուստ, իր սայլակը յառաջ մղելով, սկսաւ կամուրջէն անցնիլ: Երբ մէջտեղը եկաւ, կեցաւ և

բարձր ձայով ըստւ, որպեսողի տիրացուն իմանայ.

— Կը բաւէ ո՛քափ որ քշեցի այս յիմար ունուակը, ա՛յնչափ ծանր է որ կարծես քար լեցուած է մէջը: Ես հիմա ջուրը կը նեաեմ զայն: Եթէ ջուրին երեսը մնայ, աանս առջեւէն անցած ատեն դուրս կը հանեմ. եթէ գեախն յատակը երթայ, կարուսաս մեծ բան մը չպիտի ըլլայ:

Երկու ձեռքերսվ բանեց սնառուկը և սկսաւ վերցնել, իբրև թէ ուղէր կամուրջին բազրիքին վրայ դնել զայն, և անկէ զահալիմել գետին մէջ:

— Ո՞չ, ո՞չ, գթութիւն, պառաց տիրացուն, ձգէ՛ որ դուրս ելլեմ:

— Ո՞չ, ու՞ն, ըստ Պլատիկ Գալուսա, սասաիկ վախցածի պէո: Սատանան մէջը մնացեր է: Ճիշդ ատոր համար պէտք է գետը նետեմ զինքը, որպէսզի խեղդուի և աշխարհ ազատի ձեռքէն:

— Ցանուն Աստուծոյ, ո՞չ, ո՞չ, ոռնաց տիրացուն: Գրիւ մը լեցուն սոկի պիտի տամ քեզի, եթէ թոյլ տաս որ դուրս ելլեմ:

— Այն աանն խնդիրը կը աարբերի, ըստ Գալուսա, և սնառուկը բացաւ:

Տիրացուն, թէւ ճղակտոր եղած, դուրս խոյացաւ, և սնառուկն առնելսվ գետը նետեց, սփոփանքի խոր հառաչ մը արձակելով: Յեաոյ իր առւնը տարաւ Գալուսաը և անոր տուաւ գրիւ մը լեցուն սոսկի: Գալուսա այս դրամն ալ սայլին մէջ դրաւ միւս դրամներուն քով, և իր առւնը վերադարձաւ:

— Խելքէս մաքես չեր անցներ թէ իմ ձիս ո՛յաքան դրամ պիտի շահեցնէ ինծի, ըստ ինքնիրեն, և իսկոյն գեախնը դիղեց իր շահած սոլոր այս հնչուն գեղեցիկ գրամները: Մեծ Գալուսա ի՛նչպէս պիտի որանեղի, երբ իմանայ թէ, ինծի գրիտանք ընել կարծած ատինը, ընտչակառակը, իրեն կը պարախմ հարըստութիւնու: Եւ սակայն չեմ ուզեր գործն ուղղակի պատմել, այլ հնարքով մը պիտի հասկցնեմ իրեն:

Տղայ մը դրկեց Մեծ Գալուսաին տունը, զրիւ մը փոխ ուղելու համար:

— Զաֆելիք ի՞նչ կրնայ սւնենալ, ըստւ ինքնիրեն Մեծ Գալուսա: Եւ ձիւթավ ծեփեց գրիւին յատակը, որպէսզի չափուելիք բանէն մաս մը չո՞ն փակած մնայ:

Եւ արգարեւ, երբ ետ բերին գրիւը, անոր յտակը գտաւ երեք կատր փայլուն սոկի:

— Աս ի՞նչ է, ըստ Մեծ Գալուսա, և իսկոյն վազեց զնաց Պլատիկ Գալուսաին տունը: Գրիւ մը լցնելու բաւական ա՛յսչափ գրամը ի՞նչպէս ձեռք ձղեցիր զուն, հարցուց անոր:

Օ՞չ, երէկ իրիկուն քաղաքին մէջ ձիուս մարթը ծախեցի և այսչափ գրամ առւին ինծի: Մարթերուն գինը ա՛յնքան բարձրացած է որ, մինչեւ հիմա չէր տեսնուած:

— Ի՞նչ շահաւոր գործ մը ընել տուի քեզի, ըստ Մեծ Գալուսա:

Անմիջակէս տունն վերադարձաւ, կացին մը

առաւ և իր չսրբ ձիերը ոպաննելով՝ անոնց մորթերը շալկեց ու քաղաք մեկնեցաւ:

— Մո՛րթ ունիմ, մո՛րթ, ով կ'ուզէ մորթ գնել, կը պոռար փողոցներուն մէջ:

Դանորդները և մուճակագործները հաստի ու պինը հարցուցին:

— Ամէն մէկուն համար գրիւ մը լեցուն ոսկի կ'ուզեմ, պատախաննեց Մեծ Գալուստ:

— Կը ծաղրե՞ս մնզ թէ խննիթ ես, պառացին. կը կարծես թէ հոս գրիւս վ կուտանք դրամը:

Աւելի հեռու գնաց, միշտ աւելի ուժով պառալով.

— Մո՛րթ ունիմ, մո՛րթ, մորթ ուզող կա՞յ:

Ուրիշ մարդիկ եկան զնելու համար: Ամէն հարցընողին գրիւ մը լեցուն ոսկի կ'առաջարկէր՝ իւրաքա՞նչիւր մորթի համար:

Ծաւող ամբողջ քաղաքին մէջ ոկտան խօսիլ այս խեղկատակին վրայ, սր մէկ ձիու համար տան մը արժէքին չափ դրամ կը պահնջէր: Զմեզ կը ծաղրէ, կ'ըսէին ամէնքը: Մուճակագործներն իրենց կօշկակալները, իսկ դանորդները իրենց գսդնոցները տոին, ու վրան թափեցան և աղօւոր մը տիեցին:

— Մո՛րթ ունիմ, մո՛րթ, կը պոռային իրենց կարգին զինքը ծաղրելու համար: Պիտի դանենք քու մորթդ, որպէսզի միւսներուն չետ զայն ալ ծախես զեղեցիկ ու շիկակարմիր մարոկնի (սախիան) մը պիտի ըլլայ:

Եւ արդարեւ, արիւնը կը հոսէր՝ ընդունած կատաղի հարուածներէն: Սրաւնքներուն բոլոր ուժու-

վը ոկտաւ փախչիլ և խուրառվաշ ու մորթը կապուտցած վիճակի մէջ քաղաք հասաւ:

— Լա՛ւ, ըստ, երբ առւն մտաւ. այս գործը սուղի պիտի նստի Պղտիկ Գալուստին, պիտի սպանակնեմ զինքը:

Արդ, այս միեւնոյն օրը Պղտիկ Գալուստին մեծ մայրը մեռած էր: Թէեւ մեծ մայրը իր վրայ չէր գուրգուրաբ, միշտ կը յանդիմանէր զինքը, այսու չանդերձ ինքը շատ ցաւեցաւ մեռնելուն համար, և ծերունիին մարմինը վերցնելով՝ դրաւ իր անկողինին վրայ զոր կանխաւ տաքցուց ջեռակով մը. կը մտածէր թէ թիրեւս թիրած է և տաքը պիտի կինդանացնէ զինքը: Վառարանը վառեց՝ սենեակը տաքցնելու համար, և գիշերը անցնելու համար՝ ինքն ալ նստաւ անկիւն մը դրուած թիկնաթոսի մը վրայ:

Բայց մէյ մըն ալ տեսնես՝ կէս զիշերին դուռը բացուեցաւ և Մեծ Գալուստ՝ ձեռքը կացին մը՝ ներս մտաւ: Ան գիտէր թէ սենեակին ո՛ր կողմն է Պղտիկ Գալուստին անկողինը: Ութերուն ծայրին վրայ կոսիելով դէպի այն կողմը ուղղուեցաւ և իր կացինով սոսկալի հարուած մը իջեցուց մեռած կնոջ գլխուն ու ճեղքեց զայն:

— Հիմա՛ եղաւ ըլլալիքը, ըստ, ա՛լ այսուհետեւ զիս չպիտի ծաղրես:

Եւ ուրախ առւն վերադարձաւ:

— Ի՞նչ զէ նկարագիր ունի այս Մեծ Գալուստը, ըստ ինքնիրին Պղտիկ Գալուստ, որ տեղէն չէր

շարժած եւ բառ մը չէր արտասանուծ: Կ'ուզէր զիս
սպաննել, և եթէ մեծ մայրս մեռած չըլլար, զիս
սպաննած պիտի ըլլար:

Ճարատարօրէն շակեց մեծ մօրը զլուխը, և վէրքը
ծածկեց երիզաւոր գդակով մը: Մեռած կնոջ հագ-
ցուց իր կիրակնօրինյ հագուստաները: Յետոյ գնաց
իր գրացիէն ձի մը փսի ասաւ և լծեց իր ճօթին (վրան
ծածկուած սայլալ), մէջը գրաւ ձեր կնոջ մարմինը
և նստաւ նստարանին վրայ աւ մեկնեցաւ զէպի
քաղաք, աւր հասաւ արեւածագին և մեծ պանդոկի
մը առջեւ կեցաւ, զովացուցիչ հեղուկ մը խմելու
համար:

Պանդոկապեար շատ հարուստ և պատուական
մարդ մըն էր, բայց սոսկալի պակասութիւն մը ու-
նէր, շատ բարկացատ էր. ոչինչ պատճառով մը ա'յն-
պէս կը բորբոքէր որ կարծես վասօդ և բորակ եղած
ըլլար:

Արդէն անկողնէն ելած և դրանը սեմին վրայ
կանոնած էր:

— Բարի լո՛յս, ըսաւ Պղտիկ Գալուստին. շատ
կանուխ գուրս ելեր էք:

— Այս', պատասխանեց միւսը: Մեծ մօրս չետ
քաղաք կուգամ գնումներ ընելու: Բայց չուղեր կա-
քէն իջնել, շատ յամա է: Սակայն, եթէ չաճիք գա-
ւաթ մը մեղրաջուր բերել իրեն, կը յուսամ որ սի-
րով ընդունի զայն: Բայց պէտք է որ ձեր ամենէն
զօրաւոր ձայնովը խօսիք հետք, որովհետեւ լաւ
չի լսեր:

— Օ՛չ չպիտի մերժէ իմ մեղրաջուրս, որուն
համբաւը շատ չեռուները տարածուած է, ըստ
պանդոկապեար:

Եւ մինչ Պղտիկ Գալուստ սրահ կը մտնէր, պան-
դոկապեար գնաց լաւագոյն ասկառէն մեծ գաւաթ մը
լիցնել, և զայն տարաւ մեռած ձեր կնոջ, զոր նստած
կը աեսնէր կառքին մէջ:

— Ահա' գաւաթ մը մեղրաջուր զոր թոռդ դըր-
կեց քեզի, պոռաց պանդոկապեար:

Պատասխան չկայ, մեռելը չի շարժեցաւ:

— Զէ՞ք լսեր, կրկնեց պանդոկապեար աւելի
բարձրացնելով ձայնը ա'յն տասիճան որ ապակիները
շարժեցան: Թոռդ քեզի կը զրկէ գաւաթ մը մեղրա-
ջուր. կեանքիդ մէջ ասկէ աղէկը չես խմած, կը
յուսամ:

Մի քանի անգամ կրկնեց: Ի վերջոյ, արիւնը գը-
լուխը ցատկեց, տեսնելով որ իր մեղրաջուրը — որով
հապար կը զգար ինքզինքը —, կ'արհամարհուի: Իր
զայրոյթին մէջ, գաւաթը նետեց ծերունի կնոջ գըլ-
իսուն, որ հարուածին ուժգնութեան տակ՝ մէկ կողմ
ինկաւ:

Պղտիկ Գալուստ, որ պատուհանին ետեւ դա-
րանակալ կը գիտէր, դուրս խոյացաւ, և պանդո-
կապեարին օձիքին կառչելով,

— Անզգա՛մ, պոռաց, մեծ մայրս սպաննեցիր,
համբախ վրայ քու բացած սո ձեղքին նայէ՛:

— Ի՛նչ դժբախտութիւն, ըստ պանդոկապեար,

յուսահատութենէն ձեռքերը դալարելով։ Ահա թէ
ի՞նչ է բարկասիրա և անխոչիմ ըլլալուն հետեւան-
քը։ Ինձ մտիկ ըրէ՛, իմ սիրելի Պղտիկ Գալուստ, զիս
ոստիկանութեան մի՛ յանձներ, քեզի գրիւ մը լե-
ցուն ոսկի պիտի տամ, մեծ մայրդ ալ թաղել պիտի
տամ այնպիսի հանդիսաւոր կերպով, ինչպէս որ պիտի
ընէի, եթէ ի՛մ մեծ մայրս ըլլար։ Բայց բնաւ բառ մը
չպիտի խօսիս այս եղածին վրայ։ Հակառակ պարա-
գային, դատարանը վիզս կարել պիտի տայ. ասկէ ալ
աւելի անհաճոյ բան չկրնար ըլլալ։

Պղտիկ Գալուստ ընդունեց սակարկութիւնը.
գրիւ մը լեցուն փայլուն ոսկիներն առաւ, և իր մեծ
մայրը հանդիսաւոր կերպով թաղել տուաւ։

Երբ իր գանձին հետ տուն վերադառն, նորէն
տղայ մը դրկեց Մեծ Գալուստին տունը, և գրիւ մը
փոխ ուզեց։

— Ի՞նչ կատակ է այս, ըսաւ ինքնիրեն Մեծ
Գալուստ, միթէ իմ այս ձեռքերովս չի սպաննեցի՞
զինքը. պիտի երթամ աչքովս տեսնելու թէ ի՞նչ
կը նշանակէ այս։

Եւ գրիւը առնելով՝ վազեց զնաց Պղտիկ Գա-
լուստին տունը։ Տերանարաց և աչքերը խոլոր մո-
լոր բացած մնաց, երբ տեսաւ որ Պղտիկ Գալուստը
իր բոլոր գանձը պարպած՝ և միակ գէղ մը կազմած
էր, և ձեռքը մէջը խօթած՝ մեծ ուրախութեամբ կը
իտոնէր։

— Կը զարմանաս կոր, այնպէս չէ՞ զիս ողջ

առողջ տեսնելով, ըսաւ Պղտիկ Գալուստ, բայց սխա-
լեցար և մեծ մայրս սպաննեցիր։ Մարմինը ծախեցի
բժիշկի մը, որ գրիւ մը լեցուն ոսկի տուաւ ինծի։

— Շատ մեծ զին է, ըսաւ Մեծ Գալուստ, և դէ-
պի տուն վազեց։ Տապար մը առաւ և մէկ հարուա-
ծով սպաննեց իր խեղճ մեծ մայրը։ Մարմինը դրաւ
կառքի մը վրայ և քաղաք գնաց, որպէսզի իրեն
ծանօթ մէկ գեղազործը դանէ և հարցնէ թէ արդեօք
դիակ զնել ուզող բժիշկ մը կը ճանչնա՞յ։

— Դիա՞կ մը, զոչեց գեղազործը. ուրիէ՞ գտար
այս դիակը և ի՞նչ իրաւունքով կը ծախես զայն։

— Ո՛չ, իմս է ասիկա, պատասխանեց Մեծ Գա-
լուստ, մեծ մօրս մարմինն է։ Սպաննեցի զայն, որով-
չետեւ այս աշխարհէն այլեւս հաճոյք մը չէր զգար
խեղճ կինը. հարկաւ գրիւ մը լեցուն ոսկի կուտան
ինծի տոոր փոխարէն։

— Ողորմած Տէ՛ր, այս ի՞նչ գարշելի բարբան-
ջանք է որ կ'ընես ինծի։ Զըլլայ որ ինծի ըսածդ ու-
րիշին ալ ըսես. գլուխով վրայ կու տաս։

Եւ աւելցուց թէ, իր մեծ մայրն ալ շատ հիւանդ
էր և զզուած իր կեանքէն՝ սակայն ինքը մաքէն
չէր անցուցած այսպիսի սոսկալի սպանութիւն մը
գործել։ Արդարութիւնը՝ եթէ իմանար՝ մահուամբ
պիտի պատմէր զինքը։

Սոսկումը բոնից Մեծ Գալուստը. ինքզինքը
դուրս նետեց, առանց մնաք բարով ըսելու. կառքին
վրայ ցատկեց, ձիերը մարտկեց և վազն ի վազ իր

տունը դարձաւ։ Դեղագործը կարծեց որ մարդը խենաթեցած է, և թէ ինքը չէ ըրած այդ սպանութիւնը սրով կը պարծենար, և թողուց որ մեկնի՝ առանց ստովկանութեան իմաց առլսւ։

— Այս զործը քեզի շատ սուղի պիտի նստի, կատաղութեամբ կը արաւար Մեծ Գալուստ ամբողջ ճամբու ընթացքին. այս զործը քեզի սուղի պիտի նստի։

Երբ առւն հասաւ, խոշոր պարկ մը առաւ և շիտակ Պղափկ Գալուստին առւնը գնաց։

— Ա՛ն, այս անգամ ձեռքէս չպիտի ազատիս, պոռաց։ Զիս անգամ մըն ալ ծուղակը ձգեցիր։ Դուն ինձ սպաննել տուիր գեղեցիկ ձիերս, յետոյ մեծ մայրըս սր միշտ ա'յնչափ բարի եցած էր ինծի հանդէպ։ Տիմարութեանս վրայ շատ խնդացած ըլլալու ես։ Բայց հիմա կարգը իմս է, որ ես ալ քու վրադ խընդամ։ Ա՛լ չպիտի կրնաս ասկէց վերջ քթիս խնդաց ատոր վատահ եղիր։

Բանեց Պղափկ Գալուստին մէջքէն, և որովհետեւ ինքը անկէ շատ աւելի ուժով էր, դիւրու պարկին մէջ խօթեց և անոր բերանը չուանով պինդ կապեց։ Թետոյ կոնակը առաւ պարկը և ըստ։

— Ա՛յ ըլլալիքը, բարեկամս. հիմա քեզի պիտի տանիմ գետը նետելու։

Սակայն ճամբան երկար էր և իր բեռը՝ ծանր։ Երբ եկեղեցին տոջեէն կ'անցնէր, երգեհոնը կը թնդար և շատ գեղեցիկ երգեր կը լսուէին։ Մեծ

Գալուստ զետին դրաւ պարկը, եկեղեցին պատին կոթնցուց և ինքը ներս մտաւ, օրհներգ մը մտիկ ընելու, և Աստուծմէն ներսութիւն խնդրելու։ Իր մեծ մայրը սպաննելուն համար։ Մտածեց որ Պղափկ Գալուստ շատ լաւ կապուած էր պարկին մէջ, ու չէր կը ընար փախչիլ, և վրայ մարդ չպիտի գար, քանի որ ժամերգութիւնը շատոնց սկսած էր։

— Է՛, է՛, կը հառաչէր Պղափկ Գալուստ իր բանտին մէջ, և կը գալարուէր ու ինքն իր վրայ կը դառնար, բայց ի զուր. չէր կրնար պարկին կապը քակել։

Վրայ եկաւ ծերունի հովիւ մը, ձիւնի պէս ձերմակ մազերով։ Զեռքը մեծ ցուու մը բոնած էր և կ'առաջնորդէր եղներու ու կովերու մեծ հօտ մը։ Կենդանիներէն մինչ խոտը ճարակած ժամանակ՝ պարկին դպաւ և զայն ատպալեց։

— Ա՛յ, ա՛յ, պոռաց Պղափկ Գալուստ, իր թոքերուն բոլոր ուժովը, հաստ պարկին մէջէն լսելու ըլլալու համար։ Տակաւին շատ երիտասարդ ըլլալուն, չեմ ուզեր արքայութիւնը երթալու համար։

— Իսկ ես, խե՛զն աղայ, ըստ հովիւը, ա'յնքան ծեր եմ որ այլես չեմ կրնար ճամբայ ելլել՝ երկընքի արքայութիւնը երթալու համար։

— Ի՞նչ երջանկութիւն, ըստ բարի հովիւը և կապը քակեց։

Պղափկ Գալուստ մէկ սաստումով գուրս եղաւ։

— Բայց դուն իմ հօտիս վրայ պիտի հսկես և
լաւ պիտի խնամես այս բարի անառունները:

— Անհոգ եղիք, ըստ Պղտիկ Գալուստ, և երբ
ծերունին պարկը մտաւ, Գալուստ աղէկ մը կապեց
անոր բերանը, և շուտով հնուցաւ եղներուն և կո-
վերուն չետ:

Քիչ յետոյ Մեծ Գալուստ եկեղեցին դուրս ելաւ
և կանակն առաւ պարկը, որ առաջնութնէ աւելի թեթև
երեցաւ իրեն: Արդարեւ հովիւը, նիհար և չորսով,
Պղտիկ Գալուստին ծանրութեան հաղիւ կէսը կը
կշռէր:

— Ահա՛, ըստ անմիտան Մեծ Գալուստ, աղօթք
ընկլուս և օրհներգ մը երգելուս օգուտաք: Աստուած
զիս վարձատրեց և բեռս թեթեցուց:

Կամուրջ հասաւ և իր պարկը՝ հովիւին հետ
միասին՝ գետը նետեց, ուժգին պառալով.

— Գնա՛ խորը, հիմա այլեւս չպիտի կրնաս
քթիս խնդալ:

Եւ ուրախ զուտարթ տանը ճամբան բռնեց: Բայց
բաւական մը երթալէ յետոյ, այն ական ուր ճամբան
երկուքի կը բաժնուի, աչա՛ յանկարծ անսաւ Պղտիկ
Գալուստը, որ իր առջեւէն հօտը կը քշէր:

— Զարմանալի՛ բան, պոռաց, բայց քիչ մը առաջ
գետը չի նետեցի՞ քեզի:

— Այս՛, այս՛, պատասխանեց Պղտիկ Գալուստ.
հաղիւ կէս ժամ կիս գետը նետերդ:

— Եւ աչա՛ զիսէն դուրս ելեր ես այս աղուստը
անկաստներով:

— Ասմնք ընդծռվեայ երկը բներու կենդանիներ
են, ըստ Պղտիկ Գալուստ: Ամբողջ եղելութիւնը պի-
տի պատմեմ քեզի: բայց ամենէն առաջ քեզի չնոր-
հակալութիւնս կը յայտնամ՝ զիս զետը նետելուդ հա-
մար: Քեզի կը պարախմ այս հիմակուսան չարսաւու-
թիւնս: Արդ, այն պարկին մէջ ուր զիս թխմեցիր,
հանգիստ չէի, և երբ գետն ի վար նետեցիր զիս, հովը
ականջներութ մէջ կը սուլէր և ես շատ կը վախ-
նայի: Անմիջապէս գետին յատակը իջոյ, սակայն
տունց վնասուելու, թանձր և փափուէ խստէ գորզի
մը վրայ, ինկայ: Պարկը անմիջապէս բացուեցաւ և
զգացի որ ձեռքէս բռնից բոլորզին սպիտակ հագ-
ուած գմայլելի դեստաի աղջիկ մը, որ իր կտիուած
երկայն մազերուն վրայ գալարիքէ պսակ մ'ունէր:

«Դսուն ես, իմ բարի Պղտիկ Գալուստու, ըստ
ինձ, շատ աղէկ ըրիր որ եկար մեր մէջը բնակիլու: Աչա՛ քեզի քանի մը եզ և քանի մը կով՝ հսու ակալա-
ւորուելու չամար: Ճամբան վրայ քիչ մը աւելի
հեռուն, աւելի մեծ հօտ մը պիտի գանես: Գնա՛ աէր
եղիր ալդ հօտին, քուկդ է ան:»

— Այն ատեն, շարունակեց Պղտիկ Գալուստու,
տեսայ որ գետը ընդծռվեայ բնակչութեան համար
ճամբայ, մըն էր ուրկէ կ'երթըցաւէր երկիրներու
ներսէրը: Ի՞նչ զեղեցիկ երկիր, այնտեղ: Ամէն տեղ
հիմալի ծաղիկներ՝ ամենասիրուն գոյներով, և մա-

մուռ մը և խոտ ա'յնչափ նուրբ ու փափուկ: Մեր չսրս բոլորէն անդադար կ'անցնէին հայելացող թեփերով սիրուն ձուկեր: Եւ ո'րչափ քաղցրաբարոյ և հաճելի են բոլոր այս ընդծովեայ կիներն ու այրերը:

— Ուրեմն, ընդմիջեց Մեծ Գալուստ, քանի որ այդ տեղն ա'յնքան լաւ և ա'յնքան գեղեցիկ է, ինչո՞ւ համար ցամաք ելար: Եթէ ևս ըլլայի, յաւիտեան հռն կը մնայի:

— Այս', բայց պատճառը չիմա պիտի ըսեմ քեզի, ըստ Պղտիկ Գալուստ, ասիկա հնարք մըն է իմ կողմէս: Այն մանկամարդ կինն ըստ թէ, ինձ յատկացուած հօտը պիտի գանեմ ճամբուն վրայ աւելի ցած տեղ մը: Ճամբայ ըսածը՝ գետին յատակը, փոսն է: Այդ ճամբան շատ գարճուածքներ ունի դէպի աջ և ձախ: Ճամբան կարծեցնելու համար, ջուրէն դուրս ելայ և գաշտերուն մէջէն ճամբան պիտի կտրեմ մինչեւ ինձ համար նշանակուած տեղը. այս կերպով գոնէ կէս մզոն ճամբայ պիտի շահիմ. յետոյ նորէն ջուրը պիտի մանեմ, և անգամ մը որ հօտիս գլուխը ըլլամ, այլ եւս ցամաքի վրայ շատ քիչ անգամ! պիտի տեսնես զիս:

— ի'նչ բաղդաւոր մարդ ես, ըստ Պղտիկ Գալուստ: Ամէն գործդ յաջող կ'երթայ: Կը կարծե՞ս թէ, եթէ ես ալ գետին յատակը երթամ, մանկամարդ կինը ինծի ալ պիտի տայ քեզի տուածին պէս գեղեցիկ կենդանիներ:

— Ասոր բնաւ տարակոյս չկայ, պատասխանեց

Պղտիկ Պալուստ: Այս ջրայինները շատ կը սիրեն մարդոց ընկերութիւնը: Ուրեմն կ'ուզե՞ս որ ես ալ քեզի գետը նեսեմ, բայց դուն շատ ծանր ես և մինչեւ գետը չեմ կրնար տանիլ զքեզ: Դուն քալելով եկուր մինչեւ զան. այնտեղ պարկին մէջ ինքնիրենդ պիտի մանես, և զքեզ գետն ի վար պիտի նետեմ ամենամեծ համոյքով, քանի որ քեզի ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլամ այս կերպով:

— Որչա՞փ շնորհակալ պիտի ըլլամ քեզի: Ինծի նայէ. եթէ հո՛ն անասուններու գեղեցիկ հօտ մը տան ինծի, սիրով քեզի պիտի ներսն ինձ խաղացած բոլոր չարաճանի խաղերդ. եթէ ո՛չ, վա՛յ քեզի, անանկ ծեծ մը պիտի քաշեմ քեզի, որուն տակ հոզիդ պիտի աւանդես:

— Մի՛ ըլլար աւելի գէշ քան ո'րչափ ես: Վստաչ եզի՛ր որ հանաւալի ընդունելու թիւն պիտի ընեն քեզի:

Ծուառով գետին եզերքը հօտան: Կովկերը և եզները, սրոնք ծարաւած էին, շտապով գետափը վաղեցին՝ ջուր խմելու համար:

— Կը տիսնե՞ս, ըստ Պղտիկ Գալուստ, այս անասունները ի'նչպէս կ'աճապարհն ջուրին տակը մանկու, չոն ճարակելու համար գետին յատակի պատուական խոսք:

— Է՛յ, շատ խօսեցանք, ըստ Մեծ Գալուստ: օգնէ՛ ինծի որ պարկին մէջ մտնեմ:

Եւ, Պղտիկ Գալուստին օգնութեամբ մտաւ այն պարկին մէջ, որ ծերունի հովիւին հնոարիները կը

պարունակէր և սր կը դանուէր եզներէն մէկառն
կոհակը:

— Մէջը քար մըն տւ դի՛ր, բսաւ Մէծ Գալուստ,
որպէս զի շուտ երթամ գետին յատակը;

— Ետ կարեւոր չէ այդ, պատասխանեց Պղտիկ
Գալուստ:

Սակայն անոր մէծ հաճոյք պատճառելու համար,
պարկին մէջ թիսեց նաև իր զտած քարերէն ամեն-
նէն մեծը, յետոյ պարկին բնրանը սինդ մը կապեց
և գլուրեց կամաւրջէն վար:

Բաղադրա, և ահա՝ Մէծ Գալուստ զետին յու-
տակը իջաւ:

Ու այլեւս զուրս չ'ելաւ զետէն, ըսելաւ համար
թէ արդեօք ընդսովեայ մանկաւարդ կինը իրեն տւ
նուիրած եր տնասուններու զեզեցիկ հօտ մը, և
Պղտիկ Գալուստ, որ այս մասին ատրակոյներ ուներ,
տեղելութեւն քաղելու համար ջուրին տակ չ'իջաւ
բնաւ: Եղներն ու կովերը իր տունը տարաւ, և իր
երեք զրիւ սոկիներով՝ եղաւ գիւղին ամենէն նշա-
նաւոր ժարդը:

Վ Ե Ր Զ

ՀՀ Ազգային գրադարան



NL0390086

1662

ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐՈՒԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Agop Marachlian

8, rue Emile de Laveleye

Plovdiv—Bulgarie

Գիւ

Պուլկարփա 4 լեվա

Արտասահման 1 $\frac{1}{2}$ ֆրան. ֆր.

Печатница „ТОМАСЪ“ — „Хр. Дюкмеджиевъ“ 30
Пловдивъ